ArmLur.am

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

I SSN 1829-2763

22 նոյեմբերի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

163
(3013)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## ԱՂԱԶԱՐՅԱՆԸ ՀԱՄԱՌՈՒՄ Է, ՉԻ ՈՒԶՈՒՄ ՄԱՆԴԱՏԸ ՎԱՅՐ ԴՆԵԼ



Հովիկ Աղազարյանը անհարմար դրության մեջ է դրել Նիկոլ Փաշինյանին ու ՔՊ վերնախավին, իսկական խառնաշփոթ է ստեղծել թիմում:

Սկսենք սկզբից. Նիկոլ Փաշինյանը հոկտեմբերի 15-ի խայտառակ միջադեպերով ուղեկցված ԱԺ լսումներից հետո Նարեկ Զեյնալյանին ու Հովիկ Աղազարյանին մանդատից զրկելու որոշում էր կայացրել:

Զեյնալյանն «ինքնակամ» հեռացավ, բայց Աղազարյանը համառորեն դեռ մանդատի կռիվ է տալիս ու հրաժարվում է կատարել Փաշինյանի պահանջը: Նոյեմբերի 19-ին՝ երեքշաբթի օրը կայացած ՔՊ վարչության նիստին, Հովիկ Աղազարյանի մանդատը վայր դնելու որոշումն արդեն արձանագրվել է վարչության անդամների միաձայն որոշմամբ, բայց Հովիկ Աղազարյանը համառում է, ու մի բան էլ ինքն է վարչության անդամներին ճնշում, թե իրեն չեն կարող ստիպել մանդատը վայր դնել, այլ կարող են ընդամենը հորդորել:

Ավելին՝ Հովիկ Աղազարյանը «ուլտիմատում» է դնում ՔՊ վերնախավի առաջ՝ պահանջելով հրապարակել որոշումը, որպեսզի ինքը «մտածի» մանդատը վայր դնելու մասին:

ՔՊ վարչության անդամներն էլ, կարծես, անհարմար դրության մեջ են. քար լռություն են պահում եւ չեն հրապարակում կուսակցության վերնախավի որոշումը:

«Ժողովուրդ» օրաթերթը երեկ ողջ օրը փորձեց վարչության անդամներից պարզել՝ ինչո՞ւ չեն հրապարակում Աղազարյանի մասով կայացված քաղաքական որոշումը, սակայն վարչության անդամները չեն պատասխանում մեր զանգերին:

Ավելի վաղ էլ ՔՊ փոխնախագահի Վահագն Ալեքսանյանը եւ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հայտնել էին՝ մեկնաբանելու ոչինչ չունեն, թե Հովիկ Աղազարյանը երբ մանդատը վայր կդնի, կամ երբ կհանրայնացվի վարչության որոշումը:

Կարճ ասած՝ Աղազարյանը վատ դրության մեջ է դրել ՔՊ-ին. համարձակ հերոս է խաղում:



Վերջին օրերի պարտադրված հրաժարականներից մեկը՝ ՏԿԵՆ Գնել Սանոսյանի հեռացումը, պայմանավորված էր նրանով, որ նախարարը Փաշինյանին չէր զեկուցել կամ սխալ էր զեկուցել կատարված աշխատանքներից մեկը: Եվ ահա ստի համար հատուցեց իր պաշտոնով: Իսկ շրջակա միջավայրի պահպանության նախարար Հակոբ Սիմիդյանը զեկուցո՞ւմ է վարչապետին ոլորտում տեղի ունեցող գործընթացների մասին: Թերեւս՝ ոչ, քանզի Հակոբ Սիմիդյանը եւս անմասն չէր մնա պատասխանատվության իր բաժնից: Պաշտոնական փաստաթղթերից (Տե՛ս ArmLur.am կայքում) «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Սիմիդյանի նախարարությունը չի կարողացել ապահովել Սեւանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների կազմակերպումը եւ կապալառուի հետ կնքված պայմանագիրը միակողմանի լուծել է, քանզի աշխատանքները ժամանակին ավարտելու կանխատեսումը դարձել է ակնհայտ անհնար: Բայց այս դեպքում՝ չեն աշխատում ՔՊ-ականները՝ հատուցում է մեր ազգային հարստություն Սեւանը:



ArmLur.am-ը գրել էր, որ համաձայն իր աղբյուրներից ստացված տեղեկության՝ քաղաքական իշխանությունը վերջնական որոշում է կայացրել եւ քննչական կոմիտեի նախագահի կնշանակվի ՀՀ Գլխավոր դատախազի տեղակալ Արթուր Պողոսյանը: Իսկ ինչ ճանապարհ է անցել եւ ինչ ունեցվածք ունի Արթուր Պողոսյանը: Նա իրավական ոլորտում է վաղուց՝ սկսած 2006 թվականից: Առաջին պաշտոնը եղել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Վայոց ձորի մարզային քննչական բաժնի քննիչի, նույն վարչության Լոռու մարզային քննչական բաժնի քննիչ, ապա ավագ քննիչ: Քննիչի պաշտոնից 6 տարի անց դարձել է Լոռու մարզի դատախազության դատախազ, ապա ավագ դատախազ, ապա Շիրակի մարզի դատախազության ավագ դատախազ: Արթուր Պողոսյանի մասին ասում են՝ ոլորտի լավագույն մասնագետներից է: 2018 թվականի հեղափոխության ժամանակ եղել է Լոռու մարզի դատախազի տեղակալ, իսկ 2020 թվականի մայիսի 13-14-ին՝ ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության պետ: Պողոսյանը եղել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտի պետը: 2022 թվականի սեպտեմբերի 29-ին նշանակվել է ՀՀ զինվորական դատախազի տեղակալի պաշտոնին: Արթուր Պողոսյանը հայտարարագրել է 1 բնակարան Լոռու մարզի Վանաձոր համայնքում, նույն համայնքում 2021 թվականին ձեռք է բերել ավտոտնակ: Դատախազի տեղակալը Երեւանում եւս բնակարան ունի, որը ձեւակերպվել է որպես հիփոթեք, իսկ հիփոթեքի մայր գումարի մնացորդը 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 33 մլն 905 հազար դրամ: Նախորդ տարի՝ 2023 թվականին, Արթուր Պողոսյանը ձեռք է բերել Honda մակնիշի մեքենա, որն արժեցել է 7 մլն 800 հազար դրամ: Պողոսյանի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 1 մլն 700 հազար դրամ, իսկ կանխիկ դրամական միջոցները՝ 4 մլն դրամ, 5 հազար դոլար:




«Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական աղբյուրներից տեղեկացավ, որ ՀՀ կոռուպցիայի կանխարգելման անգլուխ մնացած հանձնաժողովը, հիմք ընդունելով սեփական ուսումնասիրության եւ աուդիտի եզրակացության տվյալները, պարզել է, որ «Բաս վոյաժ» ՍՊԸ-ն իշխանական «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը կատարել է նվիրատվություն թույլատրելի չափից 7 անգամ ավելի՝ 700 հազար դրամ: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից հարուցված ՎԻՎ/324/2024 23 էջանոց գործի արդյունքում նվիրատուի տնօրեն Արսեն Բաղդագուլյանը տուգանվել է փոխանցած գումարի չափով՝ 700 հազար դրամ: Սա նշանակում է, որ բոլոր դեպքերում ՔՊ դրամահավաքները պրոբլեմ են մեր երկրում. մասնակցելը հանգեցնում է հանրային պարսավանքի եւ փաստացի տուգանքի՝ ընկերության նկատմամբ. իսկ չմասնակցելու դեպքում էլ հարկային տուգանքի խնդրի ռիսկ է առաջանում:

ԶՐՈՒՅՑ

# «ԱՅՍ ՏԵՄՊԵՐՈՎ 2025-ԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԼՈՒՐՋ ԱՆԿՈՒՄ ԿՈՒՆԵՆԱՆՔ»

**Օրերս Ազգային ժողովում անցկացված լսումների օրակարգում Հարկային օրենսգրքի փոփոխություններն էին:**



Այս փոփոխությունները կանդրադառնան 12.800 տնտեսվարողի վրա:

Օրենքի փոփոխությունը մի շարք խնդրահարույց կետեր ունի, որոնց մասին ArmLur.am-ը զրուցել է «Ազատություն» կուսակցության նախագահ, «Միասին շարժման» համանախագահ, նախկին վարչապետ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Բագրատյանի հետ:

**-Պարո՛ն Բագրատյան, այսօր Ազգային ժողովում հարկային օրենսգրքի մասին լսումներ էին, տեղյա՞կ եք՝ օրենքն ինչ բացասական կետեր է պարունակում:**

-Դրական ոչինչ չի ներկայացնում այդ օրենքը: 2012 թվականին, երբ անցանք շրջանառության հարկի, բոլոր ոլորտները նույնպես անցան ավելացված արժեքի հարկի: Իհարկե, խոսքը չի վերաբերում խաղերին. կարծում եմ՝ Նիկոլ Փաշինյանը այդ ոլորտում անձնական շահագրգռվածություն ունի: Հիմա ինչ պրոեկտ՝ է չգիտեմ, քանզի իշխանությունը մի բան որոշում է եւ արագ մտքափոխվում է եւ ուրիշ մի բան կայացնում: Մենք ունենք 48 տեսակի գործունեության տեսակ, 2025 թվականին ԱԱՀ-ն ավելացվում է եւս 12 տեսակի գործունեության համար:

**-Մոտավորապես քանի՞ տոկոսով են այդ դեպքում ավելացվում հարկերը:**

-Այստեղ ավելանալու հարցը չէ, նախկինում դա շրջանառության հարկ էր, ենթադրենք՝ 5 տոկոս: Եթե քիչ էր դա, կարելի էր դարձնել, 6, 7, կամ 10 տոկոս, հիմա, սակայն, դա դառնում է ավելացված արժեքի հարկ: Իմ կարծիքով՝ սա բյուջեին կբերի լրացուցիչ 80-1000 միլիարդ գումար, բայց բյուջեի նպատակը փող շտամպե՞լն է.... այս տեմպերով մենք կարող ենք 2025 թվականին տնտեսական լուրջ անկում ունենալ:

**-Պարո՛ն Բագրատյան, ըստ որոշ բիզնեսմենների եւ տնտեսագետների՝նշված օրենքը հարվածի տակ է դնում մանր եւ միջին բիզնեսի գործունեությունը:**

-Նիկոլ Փաշինյանին չե՞ք հիշում, որ գոռգոռում էր, երկաթով խփում, այդ գոռգոռալու արդյունքում միացել էր մեզ՝ մեր նախաձեռնությանը՝ շրջանառության հարկի վերաբերյալ: Մեզ միացան նաեւ հանրապետականները: Նիկոլ Փաշինյանն աղաղակում էր՝ բիզնեսը հիմա ազատ կլինի, սակայն ինքն էլ հիմա ոչնչացնում է այն:

Այս փոփոխությունների հետեւանքով շատ ծառայություններ կվերանան: Ես չեմ կարող պատկերացնել փաստաբանական գրասենյակ, որն աշխատում է ԱԱՀ-ով. այսինքն՝ ստիպված պետք է խոշորանան՝իրար միանան:

Այս օրենքի ընդունման պատճառով ավելանալու են ստվերում աշխատող կազմակերպությունները, որոնք հարկ չեն վճարելու:

*Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ*

ԼՈՒՐԵՐ

## ԲԱՑԱՌՈՒՄ Է, ՈՐ ԿԱՐԵՆ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆԸ ՄԱՆԴԱՏԸ ՎԱՅՐ ԿԴՆԻ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Նիկոլ Փաշինյանը ՔՊ խմբակցության պատգամավոր, Գյումրու քաղաքապետի թեկնախու Կարեն Սարուխանյանին ուղարկել էր արյան անալիզ հանձնելու՝ արյան մեջ թմրանյութի առկայությունը ստուգելու համար:

Վերջինիս թեստի արդյունքը եղել է դրական, ինչը ՔՊ-ում նոր կրքեր է բորբոքել:

Մամուլում օրերս տեղեկություն տարածվեց, որ թեստի դրական արդյունքից հետո ՔՊ-ն Գյումրիում փոխում է քաղաքապետի թեկնածուին:

Շրջանառվում են նաեւ տեղեկություններ, որ առաջիկայում Կարեն Սարուխանյանը վայր կդնի պատգամավորի մանդատը:

ArmLur.am-ը փորձեց կապ հաստատել պատգամավորի հետ՝ տեղեկությունը ճշտելու համար, սակայն նա ողջ օրը անհասանելի էր:

ArmLur.am-ի հետ զրույցում ՔՊ խմբակցության պատգամավոր Էմմա Պալյանը վստահ հայտարարեց. «Ես բացառում եմ, որ Կարեն Սարուխանյանի մանդատը վայր դնելու հարց քննարկվի, լինելով քաղաքական թիմի անդամ՝ որեւէ պատճառ չեմ տեսնում», - ասաց նա:

Հարցին, որ պատճառը նրա թեստի դրական արդյունքն է, Էմմա Պալյանն ասաց. «Լիքը բաներ են հրապարակվում, որոնք իրականության հետ աղերս չունեն»:

Ինչ վերաբերում է Գյումրու քաղաքապետի թեկնածուի փոփոխությանը՝ Էմմա Պալյանը նշեց, որ այս պահին թեկնածու փոխելու մասին տեղեկություն չունի:

*ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ*

## ՀԱՅՏՆԻ ԵՆ ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ, ԶՈՐԱՑՐՄԱՆ ՕՐԵՐԸ

Կառավարության նոյեմբերի 21-ի նիստում հաստատվեց ձմեռային զորակոչի եւ զորացրման օրերը:

Այսպիսով՝ «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է, որ Հայաստանի Հանրապետության արական սեռի այն քաղաքացիների շարքային կազմի պարտադիր զինվորական եւ այլընտրանքային ծառայությունների ձմեռային զորակոչը (այսուհետ՝ 2024 թվականի ձմեռային զորակոչ կամ զորակոչ), որոնց 18 տարին լրանում է կամ որոնց շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից նախկինում տրված տարկետումը դադարում է մինչեւ 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ, ինչպես նաեւ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1.1-ին մասում նշված արական սեռի քաղաքացիների զորակոչը:

Համաձայն շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2024 թվականի ձմեռային զորակոչ հայտարարելու եվ զորացրում կատարելու մասին օրակարգային հարցի նախագծի՝ 2024 թվականի ձմեռային զորակոչի շրջանակներում շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչել նաեւ օրենքի 19.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն մինչեւ 2024 թվականի հոկտեմբերի 1-ը կամավոր հիմունքներով շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայություն անցնելու դիմում ներկայացրած իգական սեռի կամ օրենքի 19-րդ հոդվածի 1.2-րդ մասի համաձայն շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու ցանկություն հայտնած արական սեռի քաղաքացիներին:

2024 թվականի ձմեռային զորակոչի շրջանակներում մինչեւ 2025 թվականի հունվարի 31-ը ներառյալ զորացրել օրենքով սահմանված ժամկետում շարքային կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային զինվորական ծառայություն անցած զինծառայողներին:

2024 թվականի ձմեռային զորակոչի շրջանակներում զինված ուժերի համալրումը շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության կամ այլընտրանքային զինվորական ծառայության ենթակա քաղաքացիներով իրականացնել 2025 թվականի հունվարի 7-ից մինչեւ հունվարի 31-ը ներառյալ, իսկ օրենքով սահմանված ժամկետում շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայություն կամ այլընտրանքային զինվորական ծառայություն անցած զինծառայողների զորացրումն իրականացնել 2025 թվականի հունվարի 9-ից մինչեւ հունվարի 31-ը ներառյալ:

*Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐԵՎԱՅԻՆ ԴԱՇԻՆՔԻ ԱՆԴԱՄ

Հայաստանի Հանրապետությունը պաշտոնապես դարձել է Միջազգային արեւային դաշինքի 104-րդ լիիրավ անդամ: Այս մասին տեղեկացնում են Հնդկաստանում Հայաստանի դեսպանությունից:

Հնդկաստանի եւ Ֆրանսիայի կողմից հիմնադրված Միջազգային արեւային դաշինքին Հայաստանի լիիրավ անդամակցությունն ուժի մեջ է մտել 2024թ. նոյեմբերի 15-ից, որի համապատասխան համաձայնագիրը ստորագրվել է 2023թ. նոյեմբերի 16-ին, Երեւանում:

## ԿԱՆԱՅՔ՝ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐ

Մինչ հեղափոխությունը ոչ ոք պատկերացնել չէր կարող, որ այսօր հնարավոր է բարձրաստիճան մի շարք պաշտոնյաներ լինեն կանայք:

Ավելին՝ այսօր նրանց թիվն ավելի մեծ է, քան մինչ հեղափոխությունը:

Հիշեցնենք, որ այս մասին անգամ խոսել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ով ասել է, որ մեր կառավարությունը կանանց ներգրավվածությամբ գերազանցում է Հայաստանի բոլոր նախկին կառավարություններին:

Գաղտնիք չէ, որ Փաշինյանը մշտապես հպարտությամբ է նշել կանանց դերը քաղաքականության եւ տնտեսական գործունեության մեջ:

«Կանայք ավելի ու ավելի շատ են ներգրավվում տնտեսական գործունեության մեջ, պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման ոլորտում, դատաիրավական եւ իրավապահ համակարգերում, ինչպես վերը նշեցի՝ զինված ուժերում: Եվ սա մեր երկրի զարգացման գրավականն է, որովհետեւ կանանց իսկայական պոտենցիալը լիարժեք չօգտագործել՝ նշանակում է լինել անհեռատես»,- իր ելույթներից մեկում նշել է Փաշինյանը:

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է հայ բարձրաստիճան կին պաշտոնյաներին:

Այսպիսով՝ ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյան: Առողջապահության նախարարի պաշտոնը զբաղեցրել է 2021 թվականի հունվարի 18-ին:

ՀՀ արդարադատության նորանշանակ նախարար Սրբուհի Գալյանը արդարադատության նախարարի պաշտոնը զբաղեցրել է 2024 թվականի նոյեմբերի 5-ից:

ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյան: ԿԳՄՍ նախարարի պաշտոնը զբաղեցրել է 2022 թվականի դեկտեմբերի 13-ին:

ՀՀ ՆԳՆ նորանշանակ նախարար Արփինե Սարգսյանը նախարարի պաշտոնին նշանակվել է 2024 թվականի նոյեմբերի 20-ին:

ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյան: Վարդապետյանը գլխավոր դատախազի պաշտոնին անցել է 2022 թվականի սեպտեմբեր ամսից:

ՀՀ Գլխավոր դատախազի նախկին տեղակալ, իսկ այժմ ՀՀ Մի պաշտպան Անահիտ Մանասյան: ՀՀ Մի պաշտպանի պաշտոնը զբաղեցրել է 2023 թվականի ապրիլ ամսից:

Հավելենք, որ կին բարձրաստիճան պաշտոնյաները իրենց պաշտոնը ղեկավարում են մինչ օրս:

## ԱՄՆ-Ն ՎԵՏՈ Է ԿԻՐԱՌԵԼ

ԱՄՆ-ն օգտագործել է վետոյի իր իրավունքը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում եւ արգելափակել պաղեստինա-իսրայելական հակամարտության վերաբերյալ բանաձեւի նախագիծը, որը պահանջել է անհապաղ եւ անվերապահ հրադադար Գազայում, հայտնում է ՏԱՍՍ-ը: Փաստաթղթին կողմ են քվեարկել Անվտանգության խորհրդի 15 անդամից 14-ը:

ԱՄՆ-ն չի կարող համաձայնել Գազայի հատվածում անվերապահ հրադադարին, ասել է ՄԱԿ-ում ԱՄՆ մշտական ներկայացուցիչը:

Բանաձեւի նախագծում կա նաեւ կետ, ըստ որի, փաստաթղթի ընդունման դեպքում, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը երեք շաբաթվա ընթացքում պետք է բանաձեւի կատարման մասին գրավոր զեկույց ներկայացներ Անվտանգության խորհրդին:

## ԻՍՐԱՅԵԼԻ ՀԱՐՎԱԾՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔԸ

Իսրայելական ուժերի հարվածների հետեւանքով Գազայի հատվածում սպանվել է առնվազն 33 պաղեստինցի, այդ թվում՝ մեկ փրկարար:

Այս մասին հայտնում է Reuters-ը՝ հղում կատարելով առողջապահության ոլորտի պաշտոնյաներին:

Ըստ պաշտոնյաների՝ իսրայելական ուժերը հյուսիսային հատվածում ավելի խորն են ներխուժել՝ ռմբակոծելով հիվանդանոցը եւ պայթեցնելով տներ:

## ԹՐԱՄՓԸ ՆՈՐ ԹԵԿՆԱԾՈՒ Է ԸՆՏՐԵԼ

ԱՄՆ նորընտիր նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ Մեթյու Ուիթաքերին ընտրել է Հյուսիսատլանտյան դաշինքում (ՆԱՏՕ) ԱՄՆ դեսպանի պաշտոնի թեկնածու:

Այս մասին հայտնում է Reuters-ը:

Մեթյու Ուիթաքերը եղել է գլխավոր դատախազի պաշտոնակատար:

## ՖՐԱՆՍԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԸ ԿԱՆՉՎԵԼ Է ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱԳՆ

2024 թվականի նոյեմբերի 20-ին Ադրբեջանում Ֆրանսիայի դեսպան Անն Բուայոնը կանչվել է Ադրբեջանի արտաքին գործերի նախարարություն:

Այս մասին հայտնում են ադրբեջանական ԶԼՄ-ները:

Տարածված տեղեկության համաձայն՝ հանդիպման ընթացքում ադրբեջանական կողմը բողոք է հայտնել Ֆրանսիայի կողմից Ադրբեջանի նախագահությամբ Բաքվում կայանալիք Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի (COP29) կողմերի համաժողովի 29-րդ նստաշրջանը խափանելու Ֆրանսիայի փորձերի դեմ:

Ադրբեջանը Ֆրանսիային մեղադրել է նաեւ Հայաստանի հետ խաղաղության գործընթացը խաթարելու համար:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

# ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ԶՍՊԵԼ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԱԳՐԵՍԻԱՆ

**Բաքվում ընթացող COP 29-ի առիթով Բելգիայի Դաշնային, Ֆլանդրիայի, Վալոնիայի եւ Բրյուսելի խորհրդարանների 20 անդամներ դիմել են Ադրբեջանի կառավարությանը եւ COP 29-ին մասնակից Բելգիայի կառավարության պատվիրակությանը՝ երեք հիմնական պահանջներով. Ազատություն Ադրբեջանում գտնվող հայ ռազմագերիներին, Արցախի հայկական մշակութային ժառանգության պաշտպանություն եւ ադրբեջանական ուժերի դուրսբերում Հայաստանի Հանրապետության օկուպացված տարածքից, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության դեմ ադրբեջանական ցանկացած ագրեսիայի զսպում:**




Հայտարարությունը ստորագրվել է Բելգիայի հիմնական քաղաքական կուսակցությունների կողմից՝ MR, Les Engages, DeFI, N-VA, CD&V, Vooruit եւ Groen: Առաջին երեքի դեպքում հայտարարությունը ստորագրել են անձամբ կուսակցությունների ղեկավարները:

Բելգիացի քաղաքական գործիչները նախ շեշտում են, որ իբրեւ COP 29-ը ընդունող երկիր՝ Ադրբեջանը պարտավոր է շոշափելի հավատարմություն ցուցաբերել մարդու իրավունքների, մարդու արժանապատվության եւ արդարության հիմնարար սկզբունքներին: Այնուհետեւ նրանք նշում են իրենց պահանջները՝ հիշեցնելով 2020 թվականի դեկտեմբերի 16-ից հետո Բելգիայի Դաշնային, Ֆլանդրիայի եւ Վալոնիայի խորհրդարանների կողմից ընդունված՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ բանաձեւերը:

Այդ, ինչպես նաեւ 2021 թվականի մայիսից եւ 2024 թվականի հոկտեմբերից հետո Եվրոպական խորհրդարանի կողմից ընդունված բանաձեւերին համահունչ՝ բելգիացի քաղաքական գործիչներն Ադրբեջանի կառավարությանը կոչ են անում.

• անհապաղ եւ անվերապահորեն ազատ արձակել Բաքվում պահվող բոլոր հայ ռազմագերիներին, պատանդներին եւ գերիներին՝ներառյալ Լեռնային Ղարաբաղի ռազմաքաղաքական ղեկավարությունը:

• Ապահովել Լեռնային Ղարաբաղում հայկական մշակութային եւ կրոնական ժառանգության՝ներառյալ վանքերի խաչքարերի անձեռնմխելիությունը: Զերծ մնալ դրանց ալբանացումից, ինչպես նաեւ պատմական վերանայումներից:

• Զերծ մնալ Հայաստանի Հանրապետության դեմ սպառնալիքներից եւ ցանկացած ագրեսիայից, դուրս բերել ադրբեջանական զինուժը Հայաստանի Հանրապետությունում օկուպացված տարածքներից:

Բացի այդ, համահեղինակները Բելգիայի կառավարության պատվիրակությանը կոչ են անում COP 29-ին մասնակցության ընթացքում գործել վերը նշված խորհրդարանական բանաձեւերի ոգուն համահունչ:

Հայ դատի Եվրոպայի գրասենյակի նախագահ Գասպար Կարապետյանը ողջունել է այս նախաձեռնությունը՝ նշելով. «Մենք երախտապարտ ենք հայտարարության համահեղինակներին, որոնց թվում են խոշոր քաղաքական կուսակցությունների նախագահները, բարձրաստիճան խորհրդարանականները եւ օրենսդիր մարմնի բոլոր մակարդակների ներկայացուցիչներ: Անհրաժեշտ է ճնշում գործադրել Ադրբեջանի կառավարության վրա՝ մղելու նրանց հարգել միջազգային նորմերը եւ գործել դրանց համապատասխան: Այս հայտարարությունը ընդգծում է այդ անհրաժեշտությունը եւ հստակ ուղերձ է, որին COP29-ին մասնակից բելգիական պատվիրակությունը պետք է հավատարիմ մնա: ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի գրասենյակը կշարունակի իր հավատարմությունը արդարությանն ու խաղաղության հաստատմանը եւ միշտ կձգտի ընդգծել այդ նպատակներին հասնելու համար բովանդակալից եւ անմիջական գործողությունների անհրաժեշտությունը»:

*ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի գրասենյակ*

# ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳՆ ԱԴՐԲԵՋԱՆԻՑ ՊԱՀԱՆՋՈՒՄ Է ԱԶԱՏԵԼ ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻՆ

**Լյուքսեմբուրգի Պատգամավորների պալատը բանաձեւ է ընդունել, որտեղ, հաշվի առնելով մի շարք հանգամանքներ, դատապարտում է Ադրբեջանի իշխանությունների կողմից կիրառվող պատժամիջոցները, որոնք ուղղված են պատգամավորների եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների խմբի ազատության դեմ:**

Զեկույցով Պատգամավորների պալատն Ադրբեջանից նաեւ պահանջում է անհապաղ եւ առանց նախապայմանների ազատ արձակել անօրինական կերպով բանտարկված բոլոր անձանց:

«Պատգամավորների պալատը, հաշվի առնելով.

• Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) կողմից 2024թ. հունվարի 24-ին ընդունված 2527 բանաձեւը՝ ընդգծելով այդ լիազորությունների օրինականության եւ համապատասխանության վերաբերյալ բարձրացված մտահոգությունները,

• Ադրբեջանի արտաքին գործերի նախարարության կողմից 2024թ. օգոստոսի 26-ին ընդունված որոշումը՝ ԵԽԽՎ 76 պատգամավորներին, ներառյալ լյուքսեմբուրգցի պատգամավորներ Օկտավի Մոդերին եւ Իվ Կրուխտենին, հայտարարել որպես անցանկալի անձ (persona non grata),

• Լյուքսեմբուրգի եւ Եվրոպայի Խորհրդի 13 անդամ պետությունների համատեղ խիստ դատապարտումը՝ ուղղված ժողովրդավարական ճանապարհով ընտրված պատգամավորների նկատմամբ կիրառվող այդ միջոցառմանը եւ դրա չեղարկման վերաբերյալ հստակ կոչին,

• ԵԱՀԿ դիտորդական առաքելության եզրակացությունները, որոնք նշում են, որ 2024թ. փետրվարի 7-ին Ադրբեջանում կայացած նախագահական արտահերթ ընտրությունները տեղի են ունեցել սահմանափակ եւ քննադատական ձայների ճնշման միջավայրում՝ առանց էական քաղաքական այլընտրանքների,

• Եվրոպական խորհրդարանի 2024թ. հոկտեմբերի 24-ի բանաձեւը, որը մատնանշում է Ադրբեջանի իշխանությունների կողմից քաղաքացիական հասարակության, ակտիվիստների, քաղաքական ընդդիմադիրների եւ անկախ լրատվամիջոցների դեմ ճնշումների ուժեղացումը՝ստեղծելով վախի մթնոլորտ,

• Amnesty International-ի եւ Human Rights Watch-ի զեկույցները, ըստ որոնց, մոտ 300 մարդ ներկայումս անօրինական կերպով բանտարկված է Ադրբեջանում՝ քաղաքական պատճառներով,

• Բաց երկխոսության կարեւորությունը քաղաքացիական հասարակության եւ հասարակական կազմակերպությունների հետ՝ նրանց գործունեության ազատությունն ապահովելու նպատակով,

դատապարտում է

• Ադրբեջանի իշխանությունների կողմից կիրառվող պատժամիջոցները, որոնք ուղղված են պատգամավորների եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների խմբի ազատության դեմ,

• քաղաքացիական հասարակության, լրագրողների եւ այլ քննադատների դեմ ուղղված կամայական բանտարկությունները,

պահանջում է.

• անհապաղ եւ առանց նախապայմանների ազատ արձակել անօրինական կերպով բանտարկված բոլոր անձանց,

• վերացնել բոլոր սահմանափակումները, որոնք խոչընդոտում են ժողովրդավարական ճանապարհով ընտրված ներկայացուցիչների ազատ տեղաշարժը,

հանձնարարում է

• Պատգամավորների պալատի նախագահին այս տեքստը պաշտոնապես փոխանցել Ադրբեջանի Միլի Մեջլիսի նախագահին՝ որպես խորհրդարանական երկխոսության եւ դիվանագիտության հանձնառության նշան,

• Լյուքսեմբուրգի պատվիրակությանը ԵԽԽՎ-ում ներկայացնել արտակարգ քննարկման առաջարկ՝ 2024 թվականի նոյեմբերի 28-29-ին կայանալիք նիստում:

***Շարունակությունը՝ ArmLur.am կայքում***

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄ Է ԿԱՅԱՑՐԵԼ

# ՈՎ Է ԼԻՆԵԼՈՒ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԸ

**«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ քաղաքական իշխանությունը վերջնական որոշում է կայացրել, եւ քննչական կոմիտեի նախագահ կնշանակվի ՀՀ Գլխավոր դատախազի տեղակալ Արթուր Պողոսյանը:**




Գլխավոր դատախազությունում այդ տեղեկությունը բոլորին հայտնի է, եւ նրանք ներքին կարգով այս պահին հրաժեշտ են տալիս Արթուր Պողոսյանին եւ լավ աշխատանք մաղթում հետագա պաշտոնում:

Իսկ ինչ ճանապարհ է անցել նա:

Ծնվել է 1981 թվականի հուլիսի 10-ին:

*Կրթություն*

1998-2002թթ. - սովորել եւ ավարտել է Երեւանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը՝ ստանալով իրավագիտության բակալավրի աստիճան:

*Այլ տեղեկություններ*

ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի նախագահ

2002-2004թթ. - ծառայել է ՀՀ զինված ուժերում:

ՀՀ նախագահի 2020 թվականին դեկտեմբերի 18-ի ՆՀ-344-Ա հրամանագրով պարգեւատրվել է Մարտական ծառայության մեդալով, իսկ 2021 թվականին սեպտեմբերի 13-ի ՆՀ-266-Ա հրամանագրով՝ Արիության մեդալով:

2023 թ.-ի հունիսի 30-ին ՀՀ նախագահի հրամանագրով շնորհվել է արդարադատության երրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան:

*Աշխատանքային գործունեություն*

2022 թվականի սեպտեմբերի 30-ին նշանակվել է Գլխավոր դատախազի տեղակալ:

2022 թվականի սեպտեմբերի 29-ին նշանակվել է ՀՀ զինվորական դատախազի տեղակալի պաշտոնին:

2020 թվականի մայիսի 15-ից մինչեւ 2022 թվականի սեպտեմբերի 28-ը Ա. Պողոսյանը զբաղեցրել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտի պետի պաշտոնը:

18.04.2017-13.05.2020թթ. - Լոռու մարզի դատախազի տեղակալ, իսկ 2020 թվականի մայիսի 13-14-ին՝ ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության պետ:

11.11.2013-18.04.2017թթ. - Շիրակի մարզի դատախազի տեղակալ,

13.04.2013-11.11.2013թթ. - Շիրակի մարզի դատախազության ավագ դատախազ,

27.10.2011-13.04.2013թթ. - Լոռու մարզի դատախազության ավագ դատախազ,

22.04.2011-27.10.2011թթ. - Լոռու մարզի դատախազության դատախազ,

08.08.2006-21.04.2011թթ. - զբաղեցրել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Վայոց ձորի մարզային քննչական բաժնի քննիչի, նույն վարչության Լոռու մարզային քննչական բաժնի քննիչի, ապա՝ ավագ քննիչի պաշտոնները:

*Անձնական տվյալներ*

Ամուսնացած է, ունի երկու երեխա:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ԿԱՇԱՌԵԼ Է ՈՒ ԽԱԲՎԵԼ

## 300 000 ԴՐԱՄ՝ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ «ՉՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ»



Նոյեմբերի 16-ին՝ ժամը 15:00-ին, Երեւանի Հաշվառման-քննական բաժնում կաշառք տալու հիմնավոր կասկածի առկայությամբ ձերբակալվել եւ Երեւան քաղաքի Էրեբունու բաժին է տեղափոխվել Հրազդանի բնակիչ 23-ամյա մի երիտասարդ: Նա հայտնել է, որ մեկ շաբաթ առաջ «Տիկ-Տոկ» սոցիալական ցանցում նկատել է գովազդ՝ 300 հազար դրամ գումարի դիմաց վարորդական իրավունքի վկայական արագ ձեռք բերելու վերաբերյալ:

Կանխամտածված կեղծ գովազդի զոհ դարձած քաղաքացին նոյեմբերի 19-ին ոմն Ա. Թեւոսյան կեղծանունով տելեգրամյան ալիքի օգտատիրոջ հորդորով Երեւանի Սարյան 9 հասցեում գտնվող տերմինալներից մեկով նույն օգտատիրոջ տրամադրած կրիպտոարժույթի հաշվեհամարին, որպես կաշառք, վարորդական իրավունքի վկայական ստանալու համար փոխանցել է 285 հազար եւ 45 հազար դրամ:

«Նա ինձ զանգահարեց եւ ասաց, որ պետք է մոտենամ Սարյան 9 հասցե, որտեղ տեղակայված է բիթքոյնի տերմինալ: Ուղարկեցի 285 հազար դրամ: Չեկը նկարեցի եւ ուղարկեցի իրեն: Մի քանի րոպե հետո զանգահարեց եւ ասաց, որ իմ անունով ակտ կա, եւ 2-րդ անգամ փոխանցեցի 45 հազար դրամ: Հետո նա ինձ զանգահարեց եւ ասաց, որ մոտենամ «Գաջի գործարան»՝ ՄՌՈւ: Մտա վարորդական վկայական ստանալու սենյակ, եւ ինձ ասացին, որ իմ անունով վարորդական չկա»,-իր խոսքում նշել է 23-ամյա երիտասարդը:

Մինչ համայնքային ոստիկանության Էրեբունու բաժին ներկայացվելը՝ 23-ամյա երիտասարդը տելեգրամյան օգտատիրոջից ստացել է վերջին հաղորդագրությունը. «Դուք կորցրեցիք ձեր գումարը: Ես անհայտ խարդախ եմ եւ գտնվում եմ Վրաստանում, եթե դիմեք ոստիկանություն, դուք կունենաք լուրջ խնդիրներ օրենքի հետ կապված եւ ինձ չեք կարող բացահայտել: Եթե փորձեք ինձ վիրավորական ինչ-որ բառ գրել, ես ունեմ ձեր տվյալները: Նաեւ տեղեկացնեմ, որ ձեր գումարը արդեն Վրաստանում է»:

Համայնքային ոստիկանության Էրեբունու բաժնում ձեռնարկվում են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ տելեգրամյան օգտատիրոջ տվյալները պարզելու, հայտնաբերելու եւ վարույթ իրականացնող մարմին ներկայացնելու ուղղությամբ:

Կազմված փաստաթղթերը փոխանցվել են հակակոռուպցիոն կոմիտե:

ԼՈՒՐԵՐ

## ԱՋԱՓՆՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԿՐԱԿՈՑՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

«Ժողովուրդ» օրաթերթին երեկ քննչական կոմիտեից հայտնեցին, որ Աջափնյակի կրակոցների գործով մեկ անձի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել, կալանավորումը բավարարվել է, եւ հայտարարվել է հետախուզում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Փարաքարի ՔՊ-ական գյուղապետ Լյուդվիգ Գյուլնազարյանը այս գործով վիրավորներից մեկն է, որին կրակոցներից երկու օր հետո ազատեցին պաշտոնից :

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթին մանրամասներ են հայտնի դարձել Աջափնյակի կրակոցներից: Եղբայրը կրակել է եղբոր վրա ու նրան զրկել կյանքից: Մեզ հասած լուրերի համաձայն՝ Աջափնյակում հայտնի «Վլե»-ի ավտոլվացման կետի մոտ են գնացել մի խումբ տղաներ հարցերի պարզաբանման նպատակով: Լվացման կետը պատկանել է Փարաքարի ՔՊ-ական համայնքապետ Լյուդվիգ Գյուլնազարյանի ընկերոջը, որը նույնպես դեպքի վայրում է եղել՝ իր ընկերների կողքին լինելու ու նրանց դեմ եկած անձանց, ըստ էության, պատասխան տալու համար:

Արդյունքում, ավտոլվացման կետի մոտ հնչել են կրակոցներ: Միջադեպի մասնակիցներից մեկը, որը կռվի է գնացել եղբոր հետ, հանել է զենքն ու կրակել, ինչի հետեւանքով փամփուշտը դիպել է իր եղբորը: Վերջինս հիվանդանոցում մահացել է:

## ՄԵԿ ՏԱՐԻ ԱՆՑ

Ուղիղ մեկ տարի առաջ այս օրը՝ նոյեմբերի 21-ին, Երեւանի քաղաքապետարանում իրավիճակը թեժ էր. հայհոյանքեր, ծեծկռտուք, հրմշտոց, միմյանց սպառնալու հայտարարություններ: Քննչական կոմիտեում դեպքից մեկ տարի անց դեռ նախաքննությունը շարունակվում է. ինչին են սպասում իրավապահները:

2023 թվականի նոյեմբերի 21-ին՝Երեւանի ավագանու հերթական նիստի ժամանակ՝ավագանու մի քանի անդամների միջեւ առաջացած տարաձայնության ընթացքում, փոխադարձ հարվածներ են հասցվել, որի ընթացքում, հասարակության նկատմամբ դրսեւորելով անհարգալից վերաբերմունք, հնչել են հայհոյանքներ՝ այդկերպ խախտելով քաղաքապետարանի բնականոն աշխատանքը:

Ավագանու անդամ Անի Խաչատրյանը ամբիոնից հնչեցրեց հայտարարություններ, որոնք դահլիճում կրքերը թեժացրին: Ու երբ Անի Խաչատրյանը լքեց ամբիոնը եւ վերադառնում էր նստելու իր տեղը, սկսվեց կռիվ կինոն: Այս կռիվը ավելի թեժացավ քաղաքապետարանի միջանցքում, որտեղ խառնվեցին թաղապետները ու, ըստ ականատեսների, Շենգավիթի թաղապետ Ռազմիկ Մկրտչյանը, Կենտրոնի նախկին թաղապետ Սամվել Ղուկասյանը, ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Մեսրոպ Մանուկյանը վիճել ու հարվածներ էին հասցրել միմյանց:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական երրորդ բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի (մի խումբ անձանց կողմից խուլիգանություն կատարելը) եւ 195-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի (մի խումբ անձանց կողմից հարվածներ հասցնելը կամ բռնի այլ գործողություններ կատարելը) հատկանիշներով:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Քննչական կոմիտեն Երեւանի քաղաքապետարանի միջադեպի քրեական գործով ուսումնասիրում է լրատվամիջոցների կողմից հրապարակված տեսանյութերը, որից հետո երկու անգամ հարցաքննության էր հրավիրվել Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սոնա Աղեկյանը եւ վերջ:

Եվ ահա, այս աղմկահարույց միջադեպից մեկ տարի անց ՀՀ քննչական կոմիտեից հետաքրքրվեցինք, թե ինչով ավարտվեց քրեական վարույթը, ի պատասխան՝ հայտնեցին. «Դեռ նախաքննության փուլում է. քրեական հետապնդման ենթարկվող անձ այս պահի դրությամբ չկա»:

*Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ*

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 20-ից 21-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 129 դեպք, որից 6-ը՝նախկինում կատարված:*

ՍԱՐՔ

# ՍԻՓԱՆ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ Է ԻՋԵՎԱՆ

Իջեւան քաղաքից ՔՊ-ին մերձ աղբյուրը հայտնեց, որ առաջիկայում Հայաստան՝ Իջեւան է վերադառնալու Նիկոլ Փաշինյանի եղբորորդի Սիփան Փաշինյանը, ով նախկինում եղել է ՔՊ կուսակցությունից ԱԺ պատգամավոր: Աղբյուրը հայտնեց, որ Սիփան Փաշինյանը Իջեւան է վերադառնալու, որպեսզի ԱԺ հերթական կամ արտահերթ ընտրությունների ժամանակ ՔՊ-ի համար քվեներ ապահովի, Սիփանը Իջեւանում մնալու է առնվազն մինչեւ ընտրությունների ավարտը: 2018 թվականին կայացած Ազգային ժողովի ընտրություններում Սիփան Փաշինյանը Տավուշի մարզի թեկնածուներից ամենաշատ՝14 հազար 700 քվեն էր ստացել: Ըստ մամուլի՝Սիփան Փաշինյանը մի քանի տարի առաջ՝ Հայաստանից հեռանալուց հետո, Ուկրաինայում բուքմեյքերական եւ փայտի բիզնես է արել, Գերմանիայում՝ծաղկի բիզնես: Իջեւանից հայտնում են, որ նախկինում Իջեւանում իշխանության 2 թեւ կար. մեկում Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքիծի քավոր, Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանն ու իր եղբայր՝ ԱԺ հանձնաժողովի նախագահ Վահե Ղալումյանն են, մյուս թեւը Սիփան Փաշինյանն էր: Այդ մրցակցության մեջ Սիփանը զիջել է ու ստիպված եղել մեկնել արտասահման: Իջեւանից հայտնում են, որ Սիփան Փաշինյանի համար դժվար է լինելու ընտրությունների ժամանակ ՔՊ-ի համար շատ քվեներ ապահովել, քանի որ նույնիսկ նրանք, ում նա լավություն է արել, երես են թեքել նրանից: Որպես դրա օրինակ՝ նշում են Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանին, ով 2021թ. փետրվարի 26-ին Դիլիջան համայնքի ղեկավարի պաշտոնակատար է նշանակվել Սիփան Փաշինյանի միջնորդության շնորհիվ: Ըստ աղբյուրի՝ հիմա Դավիթ Սարգսյանը ամբողջությամբ դարձել է մարզպետ Հայկ Ղալումյանի ենթական: Ասվում է, որ նեղ շրջանակով հացկերույթի ժամանակ Դավիթ Սարգսյանը մի քանի անգամ առաջարկել է մարզպետ Հայկ Ղալումյանի կենացը խմել, իսկ վերջինս ջղայնացած ասել է Դիլիջան համայնքի ղեկավարին՝դե հերիք եղավ, քանի՞ անգամ կարելի է իմ կենացը խմել: Իրականում մարզպետ Հայկ Ղալումյանը բազում անգամ իր կենացը խմելու դեմ առարկել է ավելի կոպիտ, հրապարակելու համար ոչ հարմար բառերով:

# ԴՊՐՈՑՆԵՐԸ՝ ԹՈՇԱԿԱՌՈՒ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀՈՒՅՍԻՆ

Տավուշի մարզպետարանից տեղեկացել ենք, որ Տավուշի մարզի 76 հանրակրթական ուսումնական հաստատություններում այժմ աշխատում է 227 թոշակառու ուսուցիչ եւ 11 թոշակառու փոխտնօրեն: Տավուշի մարզում միջնակարգ մասնագիտական կրթությամբ, մանկավարժական կրթությամբ ուսուցիչներին աշխատանքից ազատեցին, որ դպրոցներում շարունակեն աշխատել կենսաթոշակառու ուսուցիչները:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

ՅԱՐԿԵՐ

# ԻՆՉ ԹԻՐԱԽՆԵՐ ԿԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՔԻ ՇԱՌԱՎՂՈՒՄ

**2020 թվականին Ազգային ժողովում արտահերթ ռեժիմով ընդունվեց «ՀՀ հարկային օրենսգրքում» փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը, որով կատարվեց գույքահարկի գործող դրույքաչափերի փոփոխություններ, որը դարձավ հակասական դժգոհությունների պատճառ:**




«Գույքահարկի մասին» օրենքի համաձայն՝ շենքերի, շինությունների կադաստրային գնահատումն իրականացվում է երեք տարին մեկ անգամ՝ հաջորդ երեք տարիների գույքահարկի հաշվարկման համար:

Համաձայն օրենսդրական փոփոխությունների՝ գույքահարկի ավելի բարձր դրույքաչափերի անցնելու ժամկետը սահմանվել է վեց տարի: Այսպիսով՝ անշարժ գույքի սեփականատերերն առաջին անգամ գույքահարկի նոր սանդղակով վճարում կկատարեն 2021 թվականի դեկտեմբերին՝ գույքահարկի 25 տոկոսը, 2022 թվականին՝ 30 տոկոսը, 2023 թվականին՝ 35 տոկոսը, 2024 թվականին՝ 50 տոկոսը, 2025 թվականին՝ 75 տոկոսը, 2026 թվականին՝100 տոկոսը:

Այս տոկոսային հարաբերակցությունը հասկանալու համար կարող ենք սահմանել հետեւյալ օրինակը՝վերցնելով գույքահարկի համար մինիմալ արժեք 20 հազար դրամ: Գրաֆիկին նայելով կարող եք հասկանալ, թե ինչ փոփոխության է ենթարկվել գույքահարկը՝ թանկանալով գրեթե 4 անգամ:

Համաձայն որոշ տնտեսագետների՝ սա արվում է մեկ նպատակով. քանի որ իշխանությունները որոշում են կայացրել պետական բյուջեից ֆինանսներ չհատկացնել տեղական ինքնակառավարման մարմիններին, այդ պատճառով անհրաժեշտություն է առաջանում ստեղծել կայուն եկամուտ՝ ՏԻՄ գործունեությունը ապահովելու եւ համայնքի կարիքները հոգալու համար:

Որքան էլ շատ են բողոքները, որ ՀՀ-ում գույքահարկը դարձել է 100%, այնուամենայնիվ, ՀՀ կառավարությունը չի նախատեսում դրանք կրկին վերանայել: Իսկ հարկային օրենսգրքի նոր փոփոխությունները գույքահարկի մասին որեւէ տեղում չեն պարունակում

Գույքահարկից ազատվում են՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ գծային ինժեներատրանսպորտային շինությունները, եթե դրանցից օգտվելու համար վճար չի գանձվում.

2) ջրամբարները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պետական սեփականություն համարվող պատմամշակութային նշանակության հարկվող օբյեկտ համարվող շինությունները:

4) Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների ընթացքում զոհված (մահացած), ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած եւ օրենքով սահմանված կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված անձանց (կամ ընտանիքի անդամներին) պատկանող գույքը՝մինչեւ այդ անձանց զավակներից մեկի 18 տարին լրանալը.

5) սոցիալական ապահովության մարմիններից արտոնյալ պայմաններով ավտոմեքենաներ ստացած հաշմանդամները՝ այդ ավտոմեքենաների մասով եւ այլք:

Առաջին հայացքից ամեն բան կարգին է եւ ոչինչ չկա մտահոգվելու, սակայն ArmLur.am-ը, զրուցելով ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Թադեւոս Ավետիսյանի հետ, առանձնացրել է կետեր՝ ինչ թիրախներ կան այս օրենքի շառավղում:

«Գույքահարկի ավելացման փաթեթավորումը երբ բերեցին, ասում էին՝ մենք փորձում ենք գույքահարկով մեղմել սոցիալական անարդարությունը, որը գալիս էր եկամտային հարկի համահարթեցումից: Փորձեցին պրոգրեսիվ հարկման անվան տակ բարձրացնել գույքահարկի դրույքաչափը: Սա հիմնականում ոչ թե հարստության հարկման տարր ունի, այլ իրականում հարկ «քերթելու» դասական դրսեւորում է, որովհետեւ հիմնական բեռը թողնում են միջին ու ցածր եկամուտ ունեցող խավի վրա»,- ասում է Ավետիսյանը:

Պատգամավորն օրինակների է բերում նաեւ, թե ինչպես է օգտագործվում Երեւանում վճարված գույքահարկը եւ ինչպիսի անհիմն ծախսերում է ներառվում:

***Շարունակությունը կարող եք կարդալ ArmLur.am կայքում:***

***ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

ԼՈՒՐԵՐ

# ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՒՄ ԵՆ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ ԵՎ ԿԻՐԱՆՑԻ ՍԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աշխատակիցներն այցելել են Տավուշի մարզի Սրվեղ վանական համալիր եւ Կիրանց գյուղի Սբ. Երրորդություն եկեղեցի, որոնք նորոգվում ու վերականգնվում են նախարարության միջոցներով եւ պատվերով:

ՀՀ Տավուշի մարզի Սրվեղ վանական համալիրում կայացել է աշխատանքային քննարկում, որին մասնակցել են նաեւ Այգեհովիտի վարչական ղեկավարը, կապալառու ընկերության, ինչպես նաեւ որակի տեխնիկական եւ հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչները: Քննարկման ընթացքում վերանայվել եւ հստակեցվել է Սրվեղ վանական համալիրի Սուրբ Աստվածածին եւ Սուրբ Նշան եկեղեցիների վերականգնման նախագծով նախատեսված աշխատանքների իրականացման հաջորդականությունը: Արդյունքում որոշում է կայացվել աշխատանքները սկսել Սուրբ Աստվածածին եկեղեցու վերականգնումից:

# ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐԸ ՎՏԱՆԳԻ ՏԱԿ Է

Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում իրականացնող monumentwatch.org կայքը գրում է.

«2024 թվականի նոյեմբերին ադրբեջանական սոցիալական ցանցերում հայտնվել են Ստեփանակերտի հուշահամալիրի տարածքում տարբեր օգտատերերի կողմից արված տեսանյութեր: Հիմնվելով այս տեսանյութերի վրա՝ կարող ենք փաստել, որ հուշահամալիրը դեռեւս կանգուն է, անվնաս են Արցախյան պատերազմի մասնակիցների, հերոսների, նշանավոր գործիչների շիրմաքարերը: Միաժամանակ կոչեր են արվում ոչնչացնել այդ հուշահամալիրը: Նշենք, որ տեսանյութերի հեղինակներն առավելապես «շարքային» ադրբեջանցիներն են: Հուշահամալիրը ոչնչացնելու, վերափոխելու կոչերով, սակայն, առավել վտանգավոր են ադրբեջանական իշխանություններին մոտ կանգնած լրատվականների հակիրճ տեսանյութերը եւ դրանք ուղեկցող գրությունները, որտեղ հնչում են այդ կոչերը:

2024 թվականի նոյեմբերի 17-ին ադրբեջանական տելեգրամյան ալիքներից մեկով, որն աչքի է ընկնում իր անհանդուրժողականությամբ, ագրեսիվ գրություններով, բացահայտ քննարկվում էր «հայերի անօրինական կառույցները» ոչնչացնելու հարցը:

Տեսանյութում երեւում է, որ ադրբեջանական կողմը քերել է հուշարձանի հայերեն գրությունները: Ջնջվել է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին 2015 թվականին կանգնեցված զանգակատուն-հուշարձանին կից պատի հայերեն գրությունը՝Պարույր Սեւակի «Անլռելի զանգակատուն» պոեմից վերցված տողերը. «Ողբամ մեռելոց, բեկանեմ շանթեր, կոչեմ ապրողաց»:

2015 թվականին կանգնեցված հուշարձանի ճարտարապետն է Վլադիմիր Սարգսյանը, ով հուշարձանը կառուցել է որպես զանգակատուն՝ ոգեշնչվելով Սեւակի պոեմից:

*● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 19 պատահար. 1 մարդ զոհվել է, 24-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

«ՅՈՒՆԻԲԱՆԿ»

# ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՌԱՋԻՆԸ ԹՈՂԱՐԿԵԼ Է ՍՏՈՐԱԴԱՍ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ




«Յունիբանկը» հայտարարել է 10 մլն ԱՄՆ դոլարի ստորադաս պարտատոմսերի թողարկման մասին: Տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքը կազմում է 6.25%, պարտատոմսերի մարման ժամկետը՝ 7 տարի: Արժեկտրոնային եկամուտը կվճարվի եռամսյակը մեկ:

«Յունիբանկը» Հայաստանում առաջին բանկն է, որ թողարկել է ստորադաս պարտատոմսեր: Տեղաբաշխումը նախատեսվում է ավարտել 2025թ. փետրվարի 24-ին, որից հետո պարտատոմսերը կցուցակվեն Հայաստանի ֆոնդային բորսայում: Պարտատոմսերը հնարավոր է ձեռք բերել «Յունիբանկի» գլխամասային գրասենյակում կամ մասնաճյուղերում: Պարտատոմսերի ձեռքբերման նվազագույն ծավալը $10 000:

Արժեթղթերի շուկայում «Յունիբանկն» ամենաակտիվ մասնակիցներից մեկն է 2016 թվականից: AMX AWARDS 2024 մրցանակաբաշխության ժամանակ «Յունիբանկը» ճանաչվել է լավագույնը երկու անվանակարգերում՝ «Best Equity Issuer on the Exchange» եւ «Best in Secondary Equity Market»:

Ընդհանուր առմամբ, «Յունիբանկը» տեղաբաշխել եւ ցուցակել է մոտ 70 մլն դոլար արժողությամբ պարտատոմսերի 28 թողարկում: Հայաստանի ֆոնդային բորսայում ցուցակված պարտատոմսերից եկամուտն ազատվում է եկամտային հարկից եւ ոչ ռեզիդենտի շահութահարկից:

Ստորադաս պարտատոմսերի Ազդագիրը (գրանցվել է ՀՀ ԿԲ կողմից 13.11.2024թ.) հրապարակված է www.unibank.am կայքում:

Ստորադաս պարտատոմսերի թողարկմամբ ներգրավված միջոցները երաշխավորված չեն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով, քանի որ մինչեւ նշված օրենքի 5-րդ հոդվածով սահմանված հատուցման դեպքի ի հայտ գալը, պարտատոմսերը Ազդագրում նկարագրված կարգով եւ չափով փոխարկվում են բանկի սովորական բաժնետոմսերի:

«Յունիբանկը» վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

«ԱՐԵՎԱԾԱԳ»

Գ.

# ԽԹԱՆՈՒՄ ԵՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՆ

**Telcell-ի եւ Shtigen Group-ի համատեղ ջանքերով Նոյեմբերյանի պետական քոլեջը ձեռք կբերի էներգետիկ անկախություն: Կրթական հաստատությունում տեղադրվել է 24.6 կՎտ հզորությամբ արեւային կայան ու 300 լիտր տարողությամբ արեւային ջրատաքացուցիչ:**

«Արեւածագ» խորհրդանշական անվանումը ստացած ծրագիրն իրականացվում է նախաձեռնող ընկերությունների կորպորատիվ ազգային պատասխանատվության շրջանակում. նպատակն է՝ արեւային տեխնոլոգիաների միջոցով երկրում հաստատել էներգետիկ անկախություն՝ առաջնահերթություն տալով սահմանամերձ բնակավայրերին: «Արեւածագ»-ի շարունակականությունն ապահովելու նպատակով խրախուսվում են նվիրատվությունները, որոնք կարելի է կատարել նաեւ Telcell տերմինալներով եւ Telcell Wallet հավելվածով:

«Մենք 17 տարի շարունակ օգնում ենք կյանքի կոչել նախաձեռնություններ, որոնք նպաստում են Հայաստանի բնակչության բարօրությանը: Կոչ ենք անում այլ ընկերությունների եւս ներդրում կատարել եւ օգնել Նոյեմբերյանի պետական քոլեջին էներգետիկ անկախություն ձեռք բերել արեւային տեխնոլոգիաների միջոցով. դա բազմաթիվ հնարավորություններ կստեղծի ուսանողների համար»,- նշում է Telcell ընկերության գլխավոր տնօրեն Արտյոմ Ղազարյանը:



Shtigen Group-ի հիմնադիր տնօրեն Հայկ Շեկյանն իր հերթին հավաստիացնում է, որ նշված ռազմավարական նշանակության նախագծի շարունակական ընթացքը, անկախ հանգամանքներից, շատ կարեւոր է: «Մեր երկրի առջեւ ծառացած էներգետիկ մարտահրավերները հաղթահարելու համար պետք է համախմբել ջանքերը՝ առանց ժամանակ կորցնելու եւ հետ նայելու: Ուրախ եմ, որ մեր գործընկերների շարքում են սոցիալական պատասխանատու վարքագիծ որդեգրած այնպիսի ընկերություններ, ինչպիսին Telcell-ն է, որը գիտակցում է էներգետիկ կայունության կարեւորությունը»,- ասում է Shtigen Group-ի հիմնադիր տնօրենը:

Արեւային կայանն ու ջրատաքացուցիչը երկար տարիներ կբավարարեն Նոյեմբերյանի պետական քոլեջի էներգետիկ կարիքները: Ծրագրի շրջանակում քոլեջին կտրամադրվեն նաեւ ուսումնական ջրատաքացուցիչներ, դիդակտիկ պարագաներ, անվտանգության համակարգեր (բարձրության վրա աշխատանքների համար), կրթական նյութեր, որպեսզի ուսումնարանում զարգանա նաեւ վերականգնվող էներգետիկայի ճյուղը:

«Նոյեմբերյանի պետական քոլեջում մեկ տասնյակից ավելի մասնագիտական բաժին կա, այդ թվում՝ վերականգնվող էներգետիկայի: Տարեկան մոտ 2 մլն դրամի խնայված միջոցներով կվերանորոգվի մասնագիտական լաբորատորիան, կթարմացվի նյութատեխնիկական բազան, ձեռք կբերենք համակարգչային տեխնիկա: Նախատեսում ենք նաեւ գերազանց առաջադիմությամբ ուսանողներին տալ կրթաթոշակ»,- նշում է կրթական հաստատության տնօրեն Կարեն Նազարյանը:

Telcell-ի եւ Shtigen Group-ի միջեւ դեռ 2022 թվականին կնքվել էր համագործակցության հուշագիր, որի շրջանակում ֆինանսական ոլորտի առաջատար ընկերությունը 7,4 մլն դրամ էր հատկացրել «Արեւածագ Արցախում» նախագծին, որպեսզի Մարտունու արհեստագործական ուսումնարանը լիակատար անցում կատարեր վերականգնվող էներգետիկային: Նախագիծը չէր իրականացվել Արցախի շրջափակման, հետագայում՝ հայաթափման պատճառով: Նվիրաբերված գումարը նպատակին ծառայեցնելու համար անցած մեկ տարում բազմաթիվ նախագծեր էին քննարկվել: Արդյունքում՝ երկու ընկերությունները կանգ են առել Նոյեմբերյանի պետական քոլեջում էներգետիկ անկախություն հաստատելու ծրագրի վրա՝ խթանելով ոչ միայն վերականգնվող էներգետիկայի զարգացումը, այլեւ կրթական բաղադրիչը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գ.

«Սինոհիդրո Քորփորեյշն» ՍՊԸ հայաստանյան մասնաճյուղը Ազատան համայնքում ունի հանրային վաճառքի համար նախատեսված, 2018 թվականի արտադրության շարժական քարջարդիչ սարքավորում (YD150):

Գինը՝ պայմանագրային: ⇨

Հեռ.՝ +37499369094 Գեղամ

Էլ. հասցե՝ sinohydro_am_lg@163.com



ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Գ.

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Առաջին հիփոթեքային ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- ՀՀ, ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա, Ն. Հովնաթանի փողոց, 32 հասցեում գտնվող 90,3 ք.մ. բնակելի տուն, 39,4 քմ ինքնակամ շինություն եւ 0,01177 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 20800000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 09.12.2024թ.-ին ժ.12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 30.12.2025թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող

աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ-ի դրամարկղում՝աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթը եւ աճուրդի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին, լոտերի ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am , www.borsa.am կայքեր:

● *«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ՀԱՅԿԱԿԱՆ ՈԳԻՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՂ ԱՐՎԵՍՏ

# ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ ԵՎ ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐ

**Յուրաքանչյուր երկիր հայտնի է իր պատմական, մշակութային արժեքներով, որոնց թվում են նաեւ հուշարձանները, շենքերը, ճարտարապետական այլ կառույցները:**

Օրինակ՝ Փարիզը հայտնի է իր Էյֆելյան աշտարակով, Իտալիան՝ Պիզայի աշտարակով եւ այլն:

Հայաստանը հուշարձաններով, հին եւ նոր փողոցներով եւ ընդհանրապես հյուրընկալ մթնոլորտով է հայտնի: Երեկ անդրադարձել էինք երեւանյան ամենահայտնի արձաններից մեկին՝ Սասունցի Դավթին՝ ներկայացնելով նաեւ կոթողի հեղինակ Երվանդ Քոչարի արվեստին ու կյանքին առնչվող հետաքրքիր նյութեր:

Այսօր կներկայացնենք տաղանդավոր հայ նկարչի ու գրող Հովհաննես Շիրազի ընկերության մասին ուշարժան դեպքեր:

Երվանդ Քոչարը եւ Հովհաննես Շիրազը ծանոթացել են դեռ 1930-ականների սկզբին՝ այն ժամանակ, երբ երկուսն էլ արդեն նշանավոր էին իրենց արվեստներում: Չնայած այդ տարիների սոցիալական եւ քաղաքական դժվարություններին, որոնք ստվերում էին մշակութային կյանքը, նրանք զարգացնում էին միմյանց հետ ընկերական կապեր ու մտքեր փոխանակում հայրենասիրության, ստեղծագործական ազատության, մարդկային արժանապատվության էական հարցերով:

Քոչարը, ով աշխատում էր տարբեր արվեստային բնագավառներում (գեղանկարչություն, քանդակագործություն), եւ Շիրազը, ով բանաստեղծ էր եւ ֆիզիկական ու հոգեւոր ցնցումների մեջ մեծացրել էր իր ստեղծագործական մոտեցումը, հաճախ էին հանդիպում, քննարկում միմյանց ստեղծագործությունները, գրականությունն ու մշակույթը: Նրանք շատ էին խոսում հայ մշակույթի կարիքների մասին եւ այս ընկերությունը խոր ազդեցություն ունեցավ երկուսի ստեղծագործական ուղու վրա:





Մի հայտնի դրվագ կա, երբ Հովհաննես Շիրազն իր բանաստեղծություններից մեկը նվիրեց Երվանդ Քոչարին՝ իբրեւ գնահատանք նրա արվեստի նկատմամբ: Բանաստեղծությունն այդպես էլ Քոչարի համար դարձել է ոգեշնչման աղբյուր: Շիրազի «Հայաստան» բանաստեղծությունն ու մի շարք այլ ստեղծագործություններ, որոնք վերաբերում էին ազգային ցավին, կորստին ու վերածննդի հույսին, դարձան Քոչարի արվեստի թեմերը: Դրանց ներքո Քոչարը ստեղծեց այնպիսի քանդակներ ու նկարներ, որոնք արտահայտում էին ոչ միայն հայ ժողովրդի պատմությունը, այլեւ նրա վերածնունդը, պայքարը եւ ապրելու համառ որոշումը:

Մի անգամ Շիրազը գրել էր Քոչարին ուղղված գովեստային խոսք. «Դու մեր ժողովրդի հոգու նկարչությունն ու քանդակագործությունն ես, դու պատկերացնում ես այն, ինչ ես արտահայտում եմ բառերով»: Սա խոստովանություն էր այն մասին, որ Քոչարը իր ստեղծագործությունների միջոցով կարողացել էր ցույց տալ այն նույնը, ինչ Շիրազն էր խոսում իր բանաստեղծություններով՝ հայ ժողովրդի ավանդույթների, ճակատագրի, ինչպես նաեւ նրա կյանքի բովանդակության, խորության մասին:

Այս երկու հսկաների ընկերությունը ցույց է տալիս, թե ինչպես երկու տարբեր արվեստի ներկայացուցիչներ՝ մեկը բանաստեղծ, մյուսը գեղանկարիչ եւ քանդակագործ, կարող են միմյանց լրացնել՝ հասնելով նույն բարձրագույն նպատակներին՝ պահպանելով եւ տարածելով հայ մշակույթը եւ արժեքները:

Այս ընկերությունը մի մագնիսական մտքի մասին էր, որտեղ երկու արվեստագետները ոչ միայն շփվում էին, այլեւ իրենց արվեստի միահյուսմամբ ստեղծում էին մեկ ընդհանուր լեզու՝ հայ ժողովրդի հոգեւոր վերածնունդը արտահայտելու համար:

*ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ*

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՔՈՉԱՐԻ «ԻՆՔՆԱԴԻՄԱՆԿԱՐ»-Ը ԲՆՕՐԻՆԱԿ ԱՇԽԱՏԱՆՔ Է

Նոյեմբերի 20-ին Երվանդ Քոչարի որդու՝ Ռուբեն Քոչարի հրավիրած մամուլի ասուլիսի ժամանակ վերջինիս կողմից հնչել է կարծիք, որ «Հայաստանի ազգային պատկերասրահի» ՊՈԱԿ-ում Երվանդ Քոչարի ծննդյան 125-ամյակի հոբելյանական ցուցահանդեսում ներկայացվող «Ինքնադիմանկար» ստեղծագործությունը բնօրինակ չէ:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունն օպերատիվ արձագանքել է հայտարարությանը եւ հանձնարարել «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ին, որպեսզի կազմակերպվի վերը նշված ստեղծագործության փորձաքննությունը եւ նույնականացումը:

«Հայտնում ենք, որ Երվանդ Քոչարի «Ինքնադիմանկար» ստեղծագործությունը (1936 թ., փայտ/յուղաներկ, 27*22 սմ), որը ներկայացված է «Հայաստանի ազգային պատկերասրահի» ՊՈԱԿ-ում կազմակերպված «Երվանդ Քոչար 125. հատելով ժամանակ եւ տարածություն» խորագրով հոբելյանական ցուցահանդեսում, բնօրինակ աշխատանք է: Այդ են վկայում թե՛ արվեստաբանական փորձաքննության տվյալները, թե՛ ներկաշերտի համեմատական քիմիական վերլուծությունը շտեմարանային տվյալների հետ, թե՛ աշխատանքի դիմերեսի եւ դարձերեսի նկարագրությունը (ներառյալ՝ փայտի եզրագծերի բնական մաշվածությունը), ներկաշերտի՝ ժամանակի ընթացքում կրած քիմիական փոփոխությունը, աշխատանքի դարձերեսին առկա ֆրանսիական գեղանկարչական պիտույքների խանութի բնօրինակ պիտակը, եւ թե՛ նախորդիվ արված փորձագիտական հսկողությունը ԿԳՄՍՆ-ի կողմից: Աշխատանքը ողջ ցուցահանդեսային պատմության ընթացքում՝ներառյալ վերոհիշյալ հոբելյանական ցուցահանդեսից առաջ, ենթարկվել է պետական վերահսկողության, եւ առկա են այդ մասին փաստող փորձագիտական եզրակացություններ:

ԿԳՄՍՆ կայքում ներկայացված են աշխատանքի լուսանկարները՝ շրջանակից հանած վիճակում, ստորին եզրագծի հստակ մատնանշմամբ, Ռ. Քոչարի հիշատակած մեխերի պատկերներով, ինչը փոքր-ինչ դժվար տեսանելի է շրջանակով, աշխատանքի դարձերեսը՝բնօրինակ ֆրանսիական պիտակով, ինչպես նաեւ միակ լուսանկարչական ժապավեն՝ արված 1999 թ. Ե. Քոչարի 100-ամյա հոբելյանի առթիվ իրականացված աշխատանքների շրջանակում, որը, բացի արվեստաբանական եւ նյութաբանական փորձաքննությունից, աշխատանքի նույնականացման հավելյալ հնարավորություն է ընձեռում:

Հետեւաբար, Ռուբեն Քոչարի հնչեցրած կարծիքն այն մասին, որ «Ինքնադիմանկար» ստեղծագործությունը բնօրինակ չէ, չի համապատասխանում իրականությանը»,- նշում են ԿԳՄՍՆ-ից:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՀԱՆԴԻՍԱՏԵՍԻ ՀԵՏ

Հայաստանի երգի պետական թատրոնի առաջին սերունդն իր հանդիսատեսին պատմել է թատրոնի հիմնադրման տարիների մասին:

«Երգի պետական թատրոնը լի էր ջերմ հիշողություններով»,-ինչպես գրել էին թատրոնի պաշտոնական էջում:

Թատրոնի առաջին սերունդը պատմել է թատրոնի հիմնադրման տարիների մասին, ինչպես նաեւ կիսվել վառ հիշողություններով:

Միջոցառմանը մասնակցում էին երգչուհիներ Շուշան Պետրոսյանը, Նունե Եսայանը, երգիչ Արամոն եւ այլք:

ՄԱՐԶԱԿԱՆ

## ԵԶՐԱՓԱԿՉԻ ՈՒՂԵԳԻՐ ՆՎԱՃԵՑ

Երեւանում անցկացվող Ըմբշամարտի զինվորականների աշխարհի առաջնությունում երեկ ՀՀ ԶՈՒ հավաքականի մարզիկ, ժամկետային զինծառայող Տիգրան Մինասյանը (55 կգ) հաղթեց իրանցի ըմբիշին եւ նվաճեց եզրափակչի ուղեգիր:

Եզրափակիչ գոտեմարտում մեր ըմբիշը կպայքարի ոսկե մեդալի համար:

## ԳԱՍՊԱՐ ՏԵՐՏԵՐՅԱՆԸ՝ ՉԵՄՊԻՈՆ

Գասպար Տերտերյանը (67 կգ) դարձել է զինվորականների ըմբշամարտի աշխարհի չեմպիոն՝ եզրափակչում 11:0 հաշվով հաղթելով իրանցի մրցակցին:

Ավելի վաղ հունահռոմեական ոճի 60 կգ քաշային կարգի եզրափակիչում Սուրեն Աղաջանյանը հաղթել էր Հյուսիսային Կորեայի ներկայացուցիչին, Հրաչյա Պողոսյանը՝ կոլումբացի մրցակցին եւ նվաճել բրոնզե մեդալ, Էլեն Բաբաջանյանն էլ հաղթել էր Մոնղոլիայի մրցակցին՝նվաճելով արծաթե մեդալ:

## ՀԱՎԱՆԱԿԱՆ ՄՐՑԱԿԻՑՆԵՐ

Ազգերի լիգայի խմբային փուլի ավարտից հետո հայտնի են դարձել ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականի հավանական մրցակիցները:

B դիվիզիոնի ուղեգրի համար պայքարում Հայաստանի հավաքականի հավանական մրցակիցներն են Վրաստանի, Իռլանդիայի, Սլովենիայի ու Իսլանդիայի թիմերը:

Վիճակահանությունը կկայանա այսօր՝ նոյեմբերի 22-ին: Փլեյ-օֆֆի հանդիպումները նախատեսված են 2025 թվականի մարտի 20-ին եւ 23-ին:

Ազգերի լիգայի C դիվիզիոնի չորրորդ խմբում Հայաստանի հավաքականը գրավել էր երկրորդ տեղը: Վրաստանի, Իռլանդիայի, Սլովենիայի ու Իսլանդիայի հավավաքականները B դիվիզիոնում երրորդ տեղերն են զբաղեցրել իրենց խմբերում:

## ԱՇԽԱՐՀԻ ԳԱՎԱԹԻ ՈՒՂԵԳՐԻ ՆՎԱՃՈՒՄ

Մոնտենեգրոյի Պետրովաց քաղաքում ավարտվել է շախմատի Եվրոպայի 2024 թվականի անհատական առաջնությունը, որի արդյունքներով գրոսմայստեր Ռոբերտ Հովհաննիսյանն աշխարհի գավաթի ուղեգիր է նվաճել: Հովհաննիսյանը վաստակել է 8 միավոր եւ զբաղեցրել է 8-րդ հորիզոնականը: Այս մասին հայտնում են ԿԳՄՍՆ-ից:

«Հայաստանի մյուս ներկայացուցիչ, ՖԻԴԵ-ի վարպետ Էրիկ Գասպարյանը վաստակել է 7 միավոր եւ մինչեւ 18 տարեկանների պայքարում զբաղեցրել է 2-րդ հորիզոնականը: Էրիկն առաջնության շրջանակում նաեւ լրացրել է գրոսմայստերի իր առաջին նորման:

Միջազգային վարպետի իր երկրորդ նորման է լրացրել ՖԻԴԵ-ի վարպետ Հայկ Երիցյանը, որը վաստակել է 6 միավոր:

*● Նոյեմբերի 30-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում կցուցադրվի «Փարիզյան դատավճիռ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2.000-4.000 դրամ:*

# ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

## ԻՐԱՎՈՒՆՔ

**ՀԱՐՑ. Ո՞rն է աcխատանfային ղայմանագrի կնfման կարգը:**

*Մոնիկա Ղումաշյան (19 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Գրավոր աշխատանքային պայմանագիրը կնքվում է երկու օրինակից կողմերի, իսկ մինչեւ տասնչորս տարեկան աշխատողների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի դեպքում՝ ծնողներից մեկի կամ որդեգրողի կամ խնամակալի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, որի մեկ օրինակը գործատուն հանձնում է աշխատողին, իսկ մինչեւ տասնչորս տարեկան անձի մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունների ծագման դեպքում՝ ծնողներից մեկին կամ որդեգրողին կամ խնամակալին: Աշխատանքային պայմանագիրը կարող է կնքվել նաեւ կողմերի էլեկտրոնային ստորագրությամբ: Էլեկտրոնային ստորագրությամբ կնքված աշխատանքային պայմանագրի մեկ օրինակը էլեկտրոնային եղանակով փոխանցվում է աշխատողին, իսկ մինչեւ տասնչորս տարեկան անձի մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունների ծագման դեպքում՝ ծնողներից մեկին կամ որդեգրողին կամ խնամակալին:

Աշխատանքի անցնելուց առաջ գործատուն կամ նրա լիազորած անձը պարտավոր է աշխատանքի ընդունվող անձին պատշաճ ծանոթացնել աշխատանքի պայմաններին, կոլեկտիվ պայմանագրին (դրա առկայության դեպքում), ներքին կարգապահական կանոններին, աշխատավայրում նրա աշխատանքը կանոնակարգող գործատուի այլ իրավական ակտերին:

*ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Աշխատողը պարտավոր է աշխատանքային պայմանագրում նշված օրն անցնել աշխատանքի: Աշխատանքային պայմանագրում նշված օրն անհարգելի պատճառով աշխատանքի չներկայանալը հիմք է աշխատանքային պայմանագրի լուծման համար:

## ՏՆՏԵՍԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Ո՞rն է Մաfսային միության աղrանfը:**

*Լեռնիկ Գրիգորյան (49 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Մաքսային միության մաքսային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետի համաձայն՝ Մաքսային միության ապրանքները Մաքսային միության մաքսային տարածքում գտնվող ապրանքներն են, որոնք ամբողջությամբ արտադրվել են Մաքսային միության անդամ պետությունների տարածքներում, ներմուծվել են Մաքսային միության մաքսային տարածք եւ ստացել Մաքսային միության ապրանքների կարգավիճակ՝ նշված օրենսգրքին եւ (կամ) Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան, պատրաստվել են Մաքսային միության անդամ պետությունների տարածքներում նշված ենթակետի երկրորդ եւ երրորդ պարբերություններում նշված ապրանքներից եւ (կամ) օտարերկրյա ապրանքներից եւ, նշված օրենսգրքին եւ (կամ) Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան, ձեռք են բերել Մաքսային միության ապրանքների կարգավիճակ:

*ՀՀ պետական եկամուտների կոմիտե*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Մաքսային միության մաքսային օրենսգրքի 296-րդ հոդվածի համաձայն՝ «Վերաարտահանում» մաքսային ընթացակարգի դեպքում Մաքսային միության մաքսային տարածք ավելի վաղ ներմուծված ապրանքները կամ ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքները, որոնք ձեւակերպվել են «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով, այդ տարածքից արտահանվում են առանց ներմուծման մաքսատուրքերի գումարների վճարման եւ (կամ) ներմուծման մաքսատուրքերի վճարված գումարների վերադարձման (հաշվանցման) եւ առանց ոչ սակագնային կարգավորման միջոցների կիրառման:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ համացանցից*



«Հայաստան-Վրաստան. 100 տոկոս ձեռարվեստ» խորագրով ցուցադրությանը հնարավոր է գտնել երկու երկրների առանձնահատկություններն ընդգծող իրեր՝ զարդեր, հագուստ, տիկնիկներ, արվեստի գործեր, որոնք յուրահատուկ են եւ ինքնատիպ:

Ցուցադրությունը բացվեց երեկ. արվեստագետներն իրենց ձեռագործ աշխատանքներն են ներկայացնում, կա նաեւ գաստրոնոմիական մաս, ինչը նույնպես մերձեցնում է երկու ժողովուրդների մշակութային կապը:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել


2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:


## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.*


## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ




| | |
|---|---|
| Շիրակ | -2 - 6<br>+ 4 + 8 |
| Կոտայքի լեռներ | -1 - 5<br>+ 4 + 9 |
| Կոտայքի նախալեռներ | -1 + 3<br>+9 + 12 |
| Գեղարքունիք | -3 -7<br>+ 5 + 8 |
| Լոռի | -1 - 5<br>+10 + 13 |
| Տավուշ | - 2 +3<br>+12 + 14 |
| Արագածոտնի լեռներ | - 2 - 6<br>+ 2 + 7 |
| Արագածոտնի նախալեռներ | -2 + 2<br>+ 8 + 13 |

| | |
|---|---|
| Արարատ | -1 + 2<br>+13 + 15 |
| Արմավիր | -2 + 2<br>+13 + 15 |
| Վայոց ձորի լեռներ | -1 + 2<br>+ 3 + 6 |
| Վայոց ձորի նախալեռներ | -1 + 2<br>+12 + 14 |
| Սյունիքի հովիտներ | -1 + 5<br>+ 8 + 12 |
| Սյունիքի նախալեռներ | +1 + 5<br>+12 + 16 |
| ԼՂՀ | 0 + 4<br>+11 + 14 |
| Երեւան | + 6 + 8<br>+ 11 + 13 |


Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **21.11.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:



«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*